

Ն. Ա. ՆԵԿՐԱՍՈՎ

Ընտի ապերի
և

Լապտաատակները



891715

Ջ-50

Պետերստ 1936 Յերեվան

৩৩৩



891.710

4-50

Այ

Ն. Ա. ՆԵԿՐԱՍՈՎ

Մ Ո Ս Ի Ա Պ Ե Ր Ը
Յ Ե Վ
Ն Ա Պ Ա Ս Տ Ա Կ Ն Ե Ր Ը



Նկարները՝ Ն. Ն. Կուկրեյանովի

ՓՈՒԱԳՐԵՑ Զ. ԶԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936

11 JUL 2013

4399

6 NOV 2011

Փ Ո Ք Ր Ա Հ Ա Ս Ա Կ Յ Ե Ր Ե Կ Ա Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ա Ր

Պատ. խմբագիր՝ Հարություն Պեղոսյան
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան



Պետրատի տպարան
Յերևան, ԻԻ Գնունի, 4
Գլավիտի լրագոր Կ. 1079, պատվեր 437
Հրատարակչ. 3652, տիրաժ 5000



629
37

Н. А. НЕКРАСОВ
ДЕДУШКА МАЗАЙ И ЗАЙЦЫ
ГИЗ ССР Армении, Эривань



Ոգոստոս ամսին
Մի մեծ անտառում
Մոսի ապրը հեա
Վորս եյինք անում:

Որը հանդարտ եր,
Խաղաղ ու սիրուն,
Ամպի արանքից
Արևն եր փայլում:

Իայց ահա հանկարծ
Յերկինքը մթնեց,



Հորդ անձրև թափվեց՝
Հեղեղ եր կարծես:

Թրջված ու մրսած,
Յես, ապեր Մոսին,
Կեսորից հետո,
Փամի յերկուսին,

Հազիվ գյուղ հասանք,
Մտանք մի մարագ,
Կրակ վառեցինք,
Վորսի միս կերանք:

Այստեղ, մինչև վոր
Անձրևն անցներ,



Մոսի ապերը
Սկսեց պատմել.

«Մեր ճահճոտ յերկրում,
Հարթ ու տափարակ,
Հորդ անձրևներ են
Լինում շարունակ:

Այդ անձրևներից
Գետը հորդանում,
Անտառն ու դաշտը
Իր տակն ե առնում:

Գարունքին, մի որ,
Յերբ ջուրը վարար
Իր տակն եր առել
Դաշտեր ու անտառ,

Յերբ ջրի վրա
Լողում եյին շատ
Դես-դենից բերած
Գերաններ ու փայտ,

Նստեցի նավակ,
Ասի՛ մի գնամ,
Վառելիք բերեմ,
Ձմեռվա համար:

Տեսնեմ՝ ջրի մեջ
Մի փոքրիկ ցամաք,
Վորտեղ նստած են
Չորս-հինգ նապաստակ:

Ասի. «Մի վախեր,
Գալիս եմ ահա.
Հորդացած ջուրը
Ձեզ նեղել ե, համ»:



Իսկ նրանք անշարժ,
Ականջները ցից,
Կպել են գետնին
Ու նայում են ինձ:

Նավակով կամաց
Մոտեցա նրանց,

Ասի. «Իարև ձեզ,
Թշնամի չեմ յես,

Մտեք նավակը,
Յեկեք տանեմ տուն,
Զուրը կնստի—
Իաց թողնեմ դաշտում»:

Իսկ նրանք անշարժ,
Ականջները ցից,
Կպել են զետնին
Ու նայում են ինձ:

Մեկին բռնեցի,
Դրի նավակում,



Մյուսները՝ տես
Թե վոնց են ցատկում:

Հենց փոր վերջինը
Թուով ու նստեց,
Զուրը բարձրացավ,
Ցամաքը պատեց:

«Դե, շիւ-շղթիկներ,
Դե, կարճ-պոչիկներ.
Ել մի վախեցեք,
Հանգիստ նստեցեք
Իմ լավ նավակում,
Ձեզ տանում եմ տուն»:

Այսպես խոսելով
Անցնում եմ առաջ,
Յերկար թիակը
Ձեռքիս մեջ առած.

Մին ել ինչ... Հեռվից
Առաջ ե գալիս
Մի կտոր գերան՝
Հինգ շղթիկ վրան:


Գերանը թռկով
Նավիս կապեցի,
Ուռած ու փքված
Առաջ սահեցի:

Յերբ վոր յես անցա
Իմ շրտա ուղին
Յեվ վողջ ու առողջ
Հասա մեր գյուղին,

Կին ու յերեխա
Դուրս յեկան առաջ,
Բացականչեցին
Ապշած, զարմացած.

«Տես՝ ինչ ե արել
Մոսի ապերը.
Գյուղ ե բերել վողջ
Նապաստակները»:

Իսկ յերբ վոր հասանք
Բանջարանոցին,
Իմ շղթիկները
Կարծես գժվեցին:



Նավակը ափին
Դեմ առավ, թե չե,
Մի մտիկ արա—
Փախչել, կ'նչ փախչել:

Յես ել ժպտալով
Նավակի միջից
Ասացի ու ժգին
Նրանց յետևից.

«Իմ շիլ-աղբիկներ,
Դուք բարով գնաք,
Բայց ձմռան որին
Աչքիս չերեվաք,

Թե չե, հո գիտեք,
Իմ հրացանը
Վորս ե վորոնում
Դաշտում ձմռանը»...



ՀՀ Ազգային գրադարան



NL0395229

9420 30 4000

043

4399



Н. А. НЕКРАСОВ
ДЕДУШКА МАЗАЙ И ЗАИЦЫ

ГИЗ ССР Армении, Эривань